ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 5, 1962 Общественные науки

Ա. Ղ. Սրապյան

# «ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ» ՃԱՌԵՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԱՐՑԸ

*Հայ հին դարերի բազմահարուստ արձակ գրականության մեջ ամենատարածված, մատչելի և ամենագործուն տեսակներից են եղել ճառերը, որոնք ամենօրյա լայն օգտագործումն են գտել՝ հասարակության մեջ քարոզներ կարդալու նպատակով։ Ճառերի միջոցով արձագանքվել, տարածվել, խրատվել և ուսուցվել են իրականության հուզող ու հրատապ հարցերը։ Այդ է պատճառը, որ շատ լայն է եղել նրանց ընդգրկումը և հաճախակի՝ կիրառումը։ Նրանց մեջ արտացոլվել են ժամանակի ոչ միայն կրոնական, այլև հասարակական-քաղաքական կյանքը, հայրենասիրական, ազգապաշտպան գաղափարները, գիտության, լուսավորության, բարոյակրթության ու դաստիարակության խնդիրները, կենցաղավարությունը և ճանաչողական ու պատմական մեծ արժեք ներկայացնող բազմապիսի այլ հարցեր։ Նկատի ունենալով լսող ու կարդացող լայն հասարակությանը, այդ ճառերը հիմնականում եղել են դյուրալուր ու դյուրահաս։*

*Խրատական-դավանաբանական այդպիսի ճառերի մի շարք է հայ հին գրականության մեջ պահպանված և «Յաճախապատում ճառք լուսաւորք» վերնագրով հրատարակված ժողովածուն, որի հեղինակն է համարվել հայ ժողովրդի կյանքում քրիստոնեական հավատի հիմնադիր Գրիգոր Լուսավորիչը[1]։*

*Այդ ճառերի հեղինակային պատկանելության մասին առաջին անգամ իր տարակուսանքն է հայտնել հայագետ Պ. Ֆեթթերը. «Եթե այժմ Մեսրոպա իբր գլխավոր գործք պիտի ներկայացնենք ճառերու և աստվածաբանական գրվածոց ցայժ իսկ պահված հավաքում մը, անշուշտ հայ մատենագրության պատմության հմուտ անձի մը օտարոտի պիտի երևա. վասն զի թեև այս հավաքումը կհիշե Կորյուն վերոհիշատակյալ տեղույն մեջ[2], սակայն ցայսօր կորսված կկարծվեր։ Սակայն կարծենք թե կրնանք այս կորուսեալ համարված գործքին՝ ճառերու այն հավաքման հետ միևնույն ըլլալն ապացուցանել, որ դարերե ի վեր Գրիգորի Լուսավորչի կտրվեր»[3],—գրում է հեղինակը և մի քանի համոզիչ փաստարկումներ անում։*

*Նույն կարծիքն է հայտնում նաև հայագետ Ս. Վեբերը[4]։ Սրանց հետ համամիտ է Կարապետ Տեր-Մկրտչյանը։*

---

1 «Սրբոյ հօրն մերոյ երանելւոյն Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ճառք լուսաւորք», Էջմիածին, 1894 (այսուհետև՝ «Յաճախապատում»)։ Մինչ այս եղել է երեք հրատարակություն ևս. առաջին երկուսը Պոլսում, մինչև 1824 թ., երրորդը՝ Վենետիկում՝ 1838 թ.։

2 Կորյուն, Վարք Մաշտոցի։

3 Պ. Ֆեթթեր, Հայկական աշխատասիրություններ, Վիեննա, 1895, էջ 69 (թարգմանությամբ Հ. Տաշյանի)։

4 Տե՛ս Ն. Ակինյան, Կորյուն, Վարք ս. Մաշտոցի, Վիեննա, 1952, էջ 107 (ծանոթ.)։

«Յաճախապատումի» Մ. Մաշտոցի «գործ լինելն անշուշտ շատ ավելի հավանական է, քան Ս. Լուսավորչի»,—գրում է նա[5]։

Փոքր ինչ այլ կերպ է դատում այդ մասին Ա. Զամինյանը։ Նա գրում է. «Կորյունը նրա համար (Մաշտոցի—Ա. Ս.) ասում է, թե նա «շատ խրատիչ ու զգաստացուցիչ թղթեր էր ուղարկում Հայաստանի բոլոր գավառները»։ Այս թղթերի ժողովածուն հայտնի է «Յաճախապատում ճառք» (միշտ կրկնելի ճառեր) անունով, որ վերագրվում է նաև ս. Գրիգոր Լուսավորչին։ Կարելի է կարծել, թե վերջինս է իսկական հեղինակը, իսկ առաջինը՝ նույն գործը թարգմանել է նորանոր հավելումներով»[6]։

Հետագայում հարցին անդրադառնում է Մ. Աբեղյանը ևս, հանդելով Պ. Ֆեթթերի դրույթին[7]։

Ավելի ուշ՝ 1952 թ. այդ մասին եղած հնամենի տեսակետն է պաշտպանում անվանի հայագետ Ն. Ակինյանը, միանգամայն անընդունելի համարելով վերոհիշյալ գիտնականների նոր խոսքը։ Նա գրում է. «Այս «Ճառք յաճախագոյնք[8] չունին որևէ աղերս «Յաճախապատում ճառերուն» հետ, զորոնք Պ. Ֆեթթեր և Ս. Վեբեր ուղեցին Մաշտոց վարդապետի վերագրել, առ այս մերձեցնելով Կորյունի ակնարկությունները»[9]։

Սակայն հայագետներից և ոչ մեկը, առանձին խնդրի նյութ չունենալով այս հարցը, բնականաբար, մանրակրկիտ քննության չի առել այն, ուստի և հանգամանորեն չի պարզաբանել ու լուծել առաջացած տարակուսանքը։

Այսօր, հայ մտքի մեծ լուսավորիչ, հայ գրի ու գրականության հիմնադիր Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի առիթով, հետաքրքրության հատուկ հարց դարձավ «Յաճախապատում» ճառերի հեղինակի խնդիրը, որին նպաստեց կատարված հետազոտությունների հօգուտ մեծ հայրենասերի խոսելը։

* * *

«Յաճախապատում» ճառերը հոգևոր խրատներ են քրիստոնեական ուսմունքի, դավանության ու բարոյականության մասին, որ նպատակ ունեն ուսուցանել աստվածապաշտություն, ուղիղ դավանանք և, հորդորել ողջախոհության, մաքուր կենցաղավարության, աղնիվ ու առաքինի կյանքի, իմաստության ու աշխատանքի՝ տերերին ու ծառաներին, թե՛ աշխարհական և թե՛ կրոնավոր։ Այսպես, օրինակ՝ ճառեր կան հետևյալ խնդիրներին նվիրված. «Յանդիմանութիւն դժնդակ վարուց և ընծայութիւն առաքինութեան հանդիսից», «Վարդա-

5 Կ. Տեր-Մկրտչյան, Հայոց եկեղեցվո պատմություն, մասն Ա, Վաղարշապատ, 1908, էջ 121։

6 Ա. Զամինյան, Հայոց եկեղեցու պատմություն, Նոր Նախիջևան, 1908, էջ 89—90։

7 Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին, Երևան, 1944, էջ 119։

8 Նկատի ունի այն ճառերը, որ հիշատակում է Կորյունը, որպես Մեսրոպ Մաշտոցի ստեղծագործություն։

9 Ն. Ակինյան, Կորյուն, Վարք ս. Մաշտոցի, էջ 107 (ծանոթ.), Ակինյանին հավանարար՝ ծանոթ չէ Մ. Աբեղյանի կարծիքը։

պետութիւն կատարեալ ի տէր ամենարուեստ պահոց», «Վարդապետութիւն բարերար արարչին խնամոց և կշտամբութիւն անհնազանդութեան և ստահակութեան և առաջնորդութիւն բարութեան բարեացն լաւութեան», «Առաջնորդութիւն ամենարուեստ խրատուց, հանդամանք դիտութեան և իմաստից», «Վասն անփոփոխ ինքնութեան էութեանն Աստուծոյ» և այլն։

Անշուշտ իր առաքելական գործունեության ընթացքում Գրիգոր Լուսավորիչն ասել կամ գրել է բազմաթիվ ճառեր, որոնց մեջ նա մեկնել, պարզել է քրիստոնեական ուսմունքը, բացատրել միաստվածության գաղափարը, աստվածային պատվիրանների իմաստը, նշանակությունը, դրանք պահելու անհրաժեշտությունը և այլն։ Այսինքն, դեռևս հեթանոսության, կամ տարրապաշտության աստիճանում գտնվող և կամ նոր միայն քրիստոնեություն ընդունած ժողովրդին լայն առումով ծանոթացրել է իր տարածած կրոնը՝ հիմքից առած։ Իրոք, հենց այդպես էլ սկսել է նա իր վարդապետությունը՝ ըստ Ագաթանգեղոսի. «...Սկիզբն արասցուք ձեզ պատմելոյ վասն արարչութեանցն, թէ զիարդ բարի աշխարհս ստեղծաւ ի բարերարէ անտի, թէ զիարդ վարեցան կարգք աշխարհիս... թէ զիարդ եկն Որդին Աստուծոյ մարմնով յաշխարհ անարգութեամբ, թէ զիարդ դալոց է ի վախճանի նովին մարմնով և փառօք հօր, և վասն լինելոց բարեացն և հանդերձեալ դատաստանին»[10],—ասում է Գրիգոր Լուսավորիչը և այսպես ծանոթացնում՝ թե ի՞նչ է աստված, կարո՞ղ են ճանաչել, հասկանալ ու ընդունել նրան, անում է քրիստոնեության մուտքի պատմությունը, տարածումը առաքյալների միջոցով, բացատրում է թե ի՞նչ է նշանակում առաքյալ, ովքե՞ր էին նրանք, խոսում է Մարգարեների մասին, մեկնում նրանց առանձին մտքերը, դարձվածքները, պարզաբանում՝ թե ինչպե՞ս ստեղծվեց ավետարանը, բացում հեթանոսության էությունը, վեր հանում քրիստոնեության փրկարար դերը, հորդորելով մաքրվել հեթանոսության արմատացած մեղքերից, «քակել ի սատանայական գործոց չարութենէ և աստուածամուխ կենացն լինել ժառանգորդ»[11]։

Այս ամենից անմիջապես երևում է, որ խոսքն ուղղված է նորադարձների կամ ոչ քրիստոնյաների, որոնք նոր միայն պետք է դարձի գան, ընդունեն կամ չընդունեն քարոզվող նոր ուսմունքը և կամ փոքր ինչ մոտ ճանաչեն այն։ Այդպիսին չեն սակայն «Յաճախապատում» ճառերը, որքան է։ որ ցանկանք նմանություն փնտրել այդ երկուսի միջև։ Այստեղ, ճիշտ հակառակը, որոշակի զգացվում է ունկնդիրների հավատացյալ, քրիստոնյա լինելը և քարոզչի խրոնիրը՝ ուղղել հավատից շեղվածներին, խոտորվածներին, ոգեշնչել դիմադրելու բոլոր փորձություններին և հաստատ ու անփոփոխ պահել ուսուցված ճշմարիտ հավատը[12]։ Թեև նյութի ամբողջ շարադրանքն այդ ոգին ունի, սակայն բերենք մի քանի օրինակ։ Այսպես, երկրորդ ճառում հեղինակը գրում է. «Թսկ զամբարիշտս և դոնիրաւս ամբարտաւանեալս չարութեամբ, որոց խաւարեալ են միտք և օտարացեալք ի կենաց սրբոց և արդարոց, և առ նոսա երկայնամտել, զի դարձցին ի զղջումն»[13]։

---

10 «Ագաթանգեղայ պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1914, էջ 128։ (Այսուհետև՝ Ագաթանգեղոս)։

11 Ագաթանգեղոս, էջ 132։

12 «Յաճախապատում», էջ 4, Բ ճառ։

13 Նույն տեղում, էջ 10։ Այս և այսուհետև եղած ընդգծումները մերն են—Ա. Ս.։

Անկասկած է, որ խոսքն ուղված է ոչ թե կռապաշտների, այլ քրիստոնյաների, որոնք ինչ-ինչ պատճառներով օտարացել, հեռացել են իրենց նախկին՝ սրբերին ու արդարներին՝ քրիստոնյային վայել վարքից և պետք ունեն զղջման ու ներման։

Նույն միտքն է արտահայտված և հետևյալ տողերում. «եւ որ մոլորեցան ի ճշմարտութենէ անտի, բարկութիւն Աստուծոյ կայ մնայ ի վերայ նոցա»[14] կամ՝ դժոխքի և հավիտենական տանջանքների են արժանանում բոլոր նրանք, որ «ճեռացեալ օտարացան ի ստոյգ ապաշխարութենէն, որ սրբէր զնոսա և արդարացուցանէր և մերձաւորս առնէր կենացն անմահից»[15]։

Հատուկ ճառեր կան նվիրված զղջման, խոստովանության, քավության և ապաշխարության հարցերին։ Իսկ ապաշխարել, դառնալ, ետ դալ կարող է միայն քրիստոնյան։ Հեթանոսը, կամ նոր միայն քրիստոնեություն ընդունածը պետք չունի ապաշխարության, ներման. նա արդեն քավել է իր մեղքերը՝ մկրտվելով, նոր հավատն ընդունելով։ «Զի նախ յաւազանէն է թողութիւն հաւատացելոց յամենասուրբ Սրբորդութիւնն ճշմարիտ խոստովանութեամբ»[16]։

«Յաճախապատում» ճառերի մեջ նյութը քարոզվում, պատվիրվում է որպես հանրահայտ, ընդունված ու հաստատված դավանանք, որ նոր ու անծանոթ վարդապետություն չէ, կարիք չի առաջանում մեկնելու, պարզելու նրանց իմաստը, ասենք՝ ինչպե՞ս «որդին Աստուծոյ եղև որդի մարդոյ և զդնցաւ զմեր բնութիւնս», կամ ի՞նչ բան են Ավետարանը, պահքն ու ապաշխարանքը, ո՞վ է Մովսես Մարդարեն և մարգարեներն ու առաքյալներն առհասարակ։

Սակայն անցնենք կոնկրետ, անտարակուսելի փաստերի, որոնք ոչ միայն ցույց են տալիս, թե «Յաճախապատում» ճառերը չեն կապվում քրիստոնեության մուտքի հետ, այլև իրենց մեջ թաքցնում են շատ ավելի ուշ շրջանի հիշատակություններ, հեռանալով Գրիգոր Լուսավորիչի ստեղծագործությունը լինելուց։

* * *

Քրիստոնեության առաջին դարերում, երբ Հայաստանը ևս ընդունեց այդ նոր ուսմունքը և դարձրեց իր պետական կրոնը, եկեղեցին դեռևս միատարր էր։ Նրա մեջ ծայր առած ներքին վեճերը խիստ դույներ ստացան չորրորդ դարի սկզբներին։ Առանձնապես սուր բնույթ կրեցին Քրիստոսի աստվածության ու մարդեղության խնդրի շուրջը ծագած վիճաբանությունները, և այնպիսի մեծ երկպառակություն առաջացրին, որ միջամտության ստիպվեց Հռոմի Կոստանդին կայսրը և տիեզերական ժողով գումարեց։ Ժողովը հրավիրվեց 325 թ. Նիկիա քաղաքում և խիստ դատապարտեց, նզովեց վեճի պատճառ դարձած Արիոս Լիբեացուն, որը Քրիստոսին արարած էր համարում։ Հաղթանակ տարավ Արիոսին ընդդիմակաց աստվածաբանությունը՝ Ալեքսանդրիայի վարդապետությունը, որը և ուղղափառ հայտարարվեց[17]։ Հետագայում այս առթիվ ծագած վեճերը շարունակեցին է՛լ ավելի բորբոքվել ու լայն բնույթ

14 «Նույն տեղում, էջ 31։

15 Նույն տեղում, էջ 12։

16 Նույն տեղում, էջ 213։

17 Տե՛ս Ն. Տեր-Մինասյան, Ընդհանուր եկեղեցական պատմություն, հատ. առաջին, Էջմիածին, 1908, էջ 256։

ստանալ։ Առաջ եկան նոր դեմքեր, նոր հերձվածների նոր առաջնորդներ՝ Թեոդորոս Մոպսուեստացի, Նեստոր և հակառակորդներ, դումարվեցին II և III տիեզերական ժողովները և նորից հաղթանակ տարավ ուղղափառությունը։

Երկրորդ և երրորդ տիեզերական ժողովները հրավիրվեցին Կոստանդնուպոլսում և Եփեսոսում՝ մեկը 381, մյուսը՝ 431 թ.։ Այս ժողովների, դավանաբանական վեճերի և ուղղափառության հաղթանակի մասին է, որ որոշակի հիշատակություն ենք հանդիպում «Յաճախապատումի» էջերում, ճառերից մեկը՝ «Վասն մարտիրոսացն վարդապետութիւն ուսմանց» վերնագրով, ուրախությամբ արձանագրում է ժողովներում ուղղափառների տարած հաղթությունը, այդ համարելով հավատացյալների մեջ հաշտության ու խաղաղության վերականգնում. «Զի այսպէս ի ժողովս սրբոց հաղորդեսցում և տօնեսցում ի փառս ամենակալին Աստուծոյ, որ ետ նոցա զյաղթութիւն առ չար բոնաւորս...[18]։

Այսպես «սուրբ ժողովները» հիշվում են մի բանի տեղ ևս[19]։

Թեև դժվար է որոշել այս ճառը ժողովներից որի՞ առիթով է կարդացվել, բայց կասկածից վեր է մնում առնվազն 325 թ. հետո լինելը։ Սակայն «Յաճախապատումի» գրության ժամանակներն ավելի ճշգրտելու գործին օգնում է մի ուրիշ քարոզի մեջ եղած ավելի զատորոշ սահմանումը։ Այստեղ արդեն «Յաճախապատումի» հեղինակը, ի հաստատություն իր մտքերի, վկայակոչում է ոչ թե մեկ, այլ բոլոր ուղղափառ ժողովները միասին, թեև ոչ անվանապես, անդրադառնում է ուղղափառ հավատի հաստատմանը և հենվում ժողովներում սահմանված կանոնների վրա. «նաև ամենայն ուղղափառ ժողովք եպիսկոպոսաց, որ զուղղափառ հաւատսն հաստատեցին և կանոն սահմանեցին եկեղեցւոյ, և զայս սահմանեցին նզովիւք...»[20]։

Կանոնը վերաբերում է վանականությանը։ Այս հանգամանքը և ուղղափառությունը հաստատող բոլոր ժողովների վկայակոչությունը ցույց են տալիս, թե ճառը գրված է 431 թ., այսինքն ամենայն ուղղափառ ժողովներից հետո, այն էլ որոշ ժամանակ անց, որպեսզի հնարավոր լիներ անդրադառնալ եղած արդյունքներին։

Մինչդեռ Գրիգոր Լուսավորիչը վախճանվել է 325 թ. Նիկիայի ժողովից առաջ[21], կամ գուցե ժողովի միջոցին, ինչպես գրում է Մ. Օրմանյանը[22]։ Այս նշանակում է, թե Լուսավորիչը չէր կարող իր քարոզներում ու ճառերում անդրադարձած լինել ոչ իսկ առաջին տիեզերական ժողովին, կամ նրա արծարծած հարցերին։

Կա և մի ուրիշ հանգամանք, որ հարուցել են թե՛ Պ. Ֆեթթերը և թե՛ Մ. Արեղյանը։ Այդ հետևյալն է։

---

18 «Յաճախապատում», էջ 189—190։

19 Նույն տեղում, էջ 190.

20 Նույն տեղում, էջ 256։

21 Նիկիայի ժողովին մասնակցել է հորից կաթողիկոսական աթոռը ժառանգած Արիստակես հայրապետը։ «Արդեն Նիկիո ժողովի ժամանակ ամենայն հավանականությամբ ո՛չ Լուսավորիչը և ոչ Տրդատ կենդանի չէին։ Նորագույն ուսումնասիրությունների հիման վրա Տրդատի մահը ոմանք դնում են 317 թ.։ Եթե Լուսավորիչը նրանից առաջ է վախճանվել (ինչպես ընդունված է Ս. Ս.) ուրեմն Ս. Արիստակես Նիկո ժողովում մասնակցել է ոչ իբրև նորա փոխանորդը, այլ իբրև Հայոց իսկական կաթողիկոս...» (Կ. Տեր-Մկրտչյան, Հայոց եկեղեցվո պատմություն, էջ 80)։

22 Տե՛ս Մ. Օրմանյան, Հայոց եկեղեցին և յուր պատմությունը, Կ. Պոլիս, 1911, էջ 37։

Ճառերից մեկում քարոզիչն այսպիսի զգուշացուցիչ խոսքեր է գրում՝ իր ժամանակի թագավորական տունն ակնարկելով. «Եւ այս յայտնի է, զի ոչ տոհմից փառաւորութիւն փառաւոր առնի առ Աստուծոյ, այլ առաքինութեան բարետոհմութիւն։ Զի ի Հայս ոչինչ մեծազոյն և ի Պարս՝ քան զԱրշակունեաց ազգս և տոհմս... Այլ եթէ ոչ զգաստասցին ի բարի կրօնս, աւելի պատուհաս ընկալցին ի տեառնէ»[23]։

Տողերս նկատի ունենալով Պ. Ֆեթթերը գրում է. «Այս խոսքերեն կրնա հետևցվիլ, ...որ այն ժամանակի թագակիր անձնավորությունն անարժան իշխան մրն էր..., որուն վրա կամենար յուր իսկ ժողովուրդը։ ...Հեռատես հայրեն... Երբ արդեն Արտաշիսի Դ. ժամանակ պետք էին կասկածիլ դժբախտ արկածին վերահաս վտանգը»[24]։

Շարունակելով այս միտքը, Մ. Աբեղյանն ավելի որոշակի եզրակացության է հանգում. «Այս հատվածի բովանդակությունը կարելի չէ վերագրել Գրիգոր Լուսավորչին. IV դարի առաջին երեսնամյակում։ Այն ժամանակ Պարսկաստանում շատ վաղուց ընկած էր պարթևական հարստությունը, իսկ Հայաստանում թագավոր էր առաջին քրիստոնյա բարեպաշտ Տրդատը. քառասնամյա խաղաղության շրջանում, երբ Հայաստանի սահմանները շատ ընդարձակված էին. և իշխող Արշակունի հարստության անկման մասին խոսք չէր կարող լինել։ Դա հարմարվում է հայ Արշակունի տոհմի վիճակին 420-ական թվականներին, երբ թագավոր էր Արշակունի տոհմի վերջին պայազատը, Արտաշեսը, հայտնի ոչ իր «բարեկրոն» կամ «առաքինի» վարքով, երբ և հասկացողները պարզ նկատում էին այդ տոհմի մոտալուտ անկումը... Դրանով էլ որոշվում է և «Յաճախապատումի» հորինման ժամանակը՝ մոտավորապես 420-ական թվականները»[25]։

Սակայն, ինչպես ցույց տվինք, «Յաճախապատում» ճառերն ընդգրկում են ժամանակի ավելի լայն հատված, գրված լինելով նաև 431 թվականից հետո։

* * *

«Յաճախապատումի» գրության միջոցի որոշումը ժխտում է Լուսավորչի հեղինակության հարցը, իսկ բովանդակության հանգամանալից վերլուծումն ավելի ևս որոշակի է դարձնում գրողի IV—V դարերի գործիչ լինելը։

Արդեն տեսանք, որ ճառերի հեղինակը բազմիցս անդրադարձել է եկեղեցու ժողովներին ու նրանց հարուցած խնդիրներին։ Ավելացնենք և ուրիշները։

Տիեզերական ժողովներում ձևակերպվել ու հաստատվել էր ուղղափառ հավատը, որով և հաղթանակ էր տարել այն՝ ընդդեմ աղանդների։ Արձագանքելով այս հարցերին, գրողը տալիս է իր բացատրություններն ի հաստատություն, ժխտում հերձվածները և հորդորում ուղղափառության. «Յայտնի է իմաստնոց սրբոց, որ ունի զգիտութիւն ի գրոց մարգարէից և առաքելոց և վարդապետաց, թէ մի՛ է բնութիւն ամենասուրբ երրորդութեան...»[26]։ «Որպէս բոց և ջերմութիւն ի հուր. որպէս լոյս և տապ յարեգակն. որպէս ջուր և

23 «Յաճախապատում», էջ 238։

24 Պ. Ֆեթթեր, Հայկական աշխատություններ, էջ 73։

25 Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին, էջ 120։

26 «Յաճախապատում», էջ 39։

բղխումն յաղբիւրէ. որպէս բան և հոգի ի մտայ։ Շարժեալ առանձնաւորութիւնքն, այլ միաբանութիւն մի՛ է, բնութեանն և ոչ եկամուտ յառանձնաւորութիւնսն միշտ»[27]:

«Առանձնաւորութիւնք» վերնագրված մի այլ ճառում նա հայտնում է, թե դրանք սովորել, աշակերտել են մարգարեների, ճշմարիտ առաքյալների և ուղղափառ վարդապետների գործերից[28], որպեսզի առանց հոգնության, հոժարությամբ ուսուցանեն, աճեցնեն արդարության վաստակը՝ մաքուր սրտով և ուղղափառ հավատով[29]:

Ապա խրատում է ստույգ գիտությամբ և անմոլար իմաստությամբ միշտ արթուն մնալ բանսարկուի պատրանքներից, որովհետև «հաւատոյն ճշմարտութիւնն և սրբութիւնն լուսաւորէ զմիտս սիրողաց Աստուծոյ[30], մանավանդ որ ուղղահավատությամբ գործողը «գործակից լինի Հոգւոյն սրբոյ, և նորին բնակարան» շահախնդրում է հեղինակը մի այլ ճառով[31]։

Այս հարցերին նա անդրադառնում է և ավելի բացորոշ, ուղղակի մեղադրական կարդալով ու խիստ դատապարտելով քրիստոնեական ողջ աշխարհում սուր հակամարտությունների ու երկպառակությունների դրդիչներին, որ իրենց ամբարիշտ կյանքով «լինին յոլովից կորստեան պատճառք»[32]։ Բնութագրում է նրանց որպես պիղծ, «այլանդակ և այլուսմունք»[33], «որ ցուցանեն զարհամարհութիւն առ օրէնսն և զանհնազանդութիւն առ կամս նորա, և զնան խոտորնակս և անխտիր յաղտեղի իրս և յամենայն դժնդակութիւնս մեղաց»[34]։ Ապա շարունակում է ավելի դիպուկ. «...Եւ աստ մարդիկ թիւրեալ ի հերձուածս կորստեան և ի վարս անօրէնութեան բազում ժողովրդովք. որք և առաջնորդք կոչեցան և հպարտացեալ զարտուղի անկան. և բազմաց եղեն պատճառք կորստեան...։ Եւ ապստամբեալք ի մերոց և ամբարշտեալք ի բանէն որ աշակերտեցաք զճշմարտութիւնն՝ օտարացան և յետս կացին, որպէս քուրմք և կախարդք և այլ ևս չարք»[35]։

Մի այլ ճառում ևս, թեև ոչ հականե-հանվանն, նա այսպես է ներկայացնում այդ հերձվածների առաջնորդներին. «որք զանձինս իմաստուն համարեցան, և յաչս իւրեանց խորհրդականք, և զճանապարհս իմաստութեան ոչ ծանեան... վասն այնորիկ ապականեցան և պղծեցան, և ընդ ուղիղն ոչ գնացին»[36], «...մեղան և խաւարեցան ի խորհուրդս իւրեանց և կուրացան մեղօք անմտութեամբ»[37]։

Այդպիսիներին նա զգուշացնում է դառնալ սխալ ճանապարհից, մյուսներին՝ հեռու մնալ մոլորությունից, հիշեցնելով, որ աշխարհայինից բացի կան և հավիտենական տանջանքներ[38] ոչ միայն չարը ուսուցանողների, այլև լսող-

27 Նույն տեղում, էջ 55։
28 Նույն տեղում. էջ 16։
29 Նույն տեղում, էջ 19։
30 Նույն տեղում։
31 Նույն տեղում, էջ 42։
32 Նույն տեղում, էջ 34, 43։
33 Նույն տեղում, էջ 141։
34 Նույն տեղում, էջ 233։
35 Նույն տեղում, էջ 230—231։
36 Նույն տեղում էջ 241։
37 Նույն տեղում։
38 Նույն տեղում, էջ 43։

ների, սովորողների համար[39]։ Ապա անում է այսպիսի զգաստացնող համեմատություն. «եւ որպէս ի պատճառէ իմեքէ կատաղութիւն ի խելսն անկանի և հանէ ի դարմանոց. և յընտանութենէ ի վայրագութիւն մոլորեցուցանէ և ի կորուստ ինքեան և այլոց ևս, նոյնպէս և առ ուսմունս մոլորութիւն ի խելս մտացն անկանի և ցնորեցուցանէ որպէս զկատաղին, և անծանօթս առնէ ի ճշմարտութենէն ամբարիշտ և այլանդակ վարուք, որք ելանեն ընդ սահմանս բարեպաշտութեան, բայց թէ բժշկի ուրեք որպէս կատաղի։ Վասն այսորիկ պիտոյ է յոյժ զգուշութիւն պահելով զլսելիս և զմիտս յայնպիսեաց անտի վնասուց...»[40]։

Հավանական է ենթադրել, որ թե՛ այս ճառը և թե՛ աղանդավորությանը վերաբերող մյուս ճառերն իրենց զգալի մասով ուղղված են նաև մծղնեության դեմ, որ այդ ժամանակներում անչափ տարածված էր Հայաստանում։

Քրիստոնեական եկեղեցին մծղնեներին մեղադրում էր անբարո կենցաղավարության մեջ, կոչելով նրանց պիղծ և այլանդակ։ Այս աղանդավորներին նկատի ունենալով ընդդեմ պոռնկության առանձին կանոններ է սահմանել Շահապիվանի եկեղեցական ժողովը (445 կամ 447 թ.)[41]։ Սրանց մասին խոսում է և Կորյունը, անվանելով աղանդավորներին «ժանտագործ», որ նշանակում է «պոռնիկ»[42]։

Ընդդեմ պոռնկության հատուկ հանդիմանական ճառ է գրում և «Յաճախապատումի» հեղինակը, որակելով նրանց վարքը «դժպհի» ու «դժնդակ», ըստ Կորյունի՝ «դժպատեհ», «ժանտագործ», այսինքն անպատշաճ, անբարո կենցաղ ունեցող։ Պոռնկությունը համարելով գլուխ «ամենայն դժնդակ չարեաց[43]» գրողն ամբողջ մերկությամբ ի դերև է հանում այն. «Պոռնկութիւն... վրիպեցուցանէ ի հավատոց և ի սուրբ վարուց ի պատրանս մեղաց. յանառակութիւնս աղտեղիս։

Արդ փախիցուք ի պոռնկութենէ ի մօրէն չարեաց, որ յորդորիչ է ամենայն վնասուց. զի ոչ բազումս կորոյս ջրով և հրով և այլ և այլ ազգ պատուհասիւք, որպէս ասեն գիրք։ «Զի որ շնայ կամ պոռնկի, կորուստ անձինն ստանայ. և ի տեառնէ ի բաց եկաց անսուրբ անձն։ Զի տաճար են սուրբք ամենայն ամենասուրբ Երրորդութեան. և տաճար դիւաց են պոռնիկք և շունք։ Զի զկոյսս ապականէ և մերժէ ի տեառնէ, և զամուսնութիւնս քակէ և ընդ բազում չարեօք առնէ։ Զի վասն պոռնկութեան զկախարդս յօգնութիւն պղծութեան ըստ հրապուրանաց սատանայի առնուն կաշառօք...։ Վասն պոռնկութեան ոխութիւնք և այլանդակութիւնք ի կորուստ արանց և կանանց լինի։ Վասն պոռնկութեան դժպհութիւնք և երդմնահարութիւնք և ստութիւնք և գողութիւնք։ Վասն պոռնկութեան հեղկուրիւն աղօրից և պահոց և պղերգուրիւն առ ի գործս։ Վասն պոռնկութեան բազմավնաս նենգութիւնք նիւթին ինքեանք առ օտարս և ընտանիս։ Վասն պոռնկութեան խորամանկութիւնք և պէսպէս մահք յայտնիք և գաղտնիք։ Կէսք յորովայնի ճմլեն և տարաժամ անցուցանեն զմանկունս, և կամ ղեղովք ապականեն յորովայնի. և են, որ զծնեալսն սպանանեն։ Եւ է զի սնոյ տէրն և սեղեխն ի միմեանց մեռանին, կամ յայտնի մարտիւ կամ գաղտնի

39 Նույն տեղում, էջ 229։
40 Նույն տեղում, էջ 34։
41 Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին, էջ 119, 625։
42 Նույն տեղում, էջ 625։
43 «Յաճախապատումս», էջ 82։

իւիք չարիւ Եւ է զի հոմանիքն ի միմեանց խոդխոդին ի վերայ բոլիցն։ Եւ է որ բողքն խաղբս ինչ ուսանին ի կախարդաց, զի սպանցեն զարսն վասն հոմանեաց ցանկասիրաց»[44]։

Ճառի հեղինակն անմիջականորեն խոսքն ուղղում է և հենց նրանց, «որք յայսոսիկ ի սատանայէ բմբռնեալ են, արբեալ ախտիւ պոռնկութեան»[45], քարոզելով հեռու փախչել նրանից։ «Զի վասն այսորիկ գայ բարկութիւն Աստուծոյ ի վերայ երկրի, սովոյ և սրոյ և գերութեանց և պէսպէս ախտից. խռովութեանց ընտանեաց և օտարաց, ծնողաց և ծննդոց, ծառայից և տերանց, յորս կագք և կռիւք և մահք»[46]։

Այդպիսիներին, շարունակում է քարոզիչը. «Առաջին օրէնքն քարկոծ առնէին և կամ հրով այրէին. և նորս՝ արտաքս ունի յեկեղեցւոյ և ի ժողովրդոց. մինչև բազում լալով ի տուէ և ի գիշերի ի խորգ և մոխիր պահօք ապաշխարեսցէ...»[47]։ Կամ՝ «Հոտոտելիք ճշմարտեալ հաւատով ճանաչէ զորդիս լուսոյ և զորդիս խաւարի. իմանայ զկամս իւրաքանչիւր զուղղութեան և զմոլորութեան, որ այլանդակ և այլուսմունք են, որ որոշեն զնոսա ի բաց հոտովն սուրբ ըստ հրամանի տեառն՝ արտաքս հանելով ի խնամոց Աստուծոյ ի խաւարն արտաքին, ուր լալ աշաց է և կրճել ատամանց»[48]։

Որպես մոլորությունից խուսափելու առավել վստահելի միջոց, քարոզիչը կտրուկ խորհուրդ է տալիս պարզապես չքննել աղանդները, չզբաղվել նրանցով, դագարել ի զուր, անիմաստ պրպտումներից։ «Եւ ոչ է արժան զաղանդսն խուզել, և ի նոսա դեգերել ի կորուստն»[49], «Զի մի մոլորեսցին զկնի սուտ կարծեաց և պատիր խարերայ բանից այլանդակաց և աղանդաւորաց...»[50]։ «Վասն այսորիկ լռեսցուք ի դատարկ և ի վայրապար քննութենէ, և զհետ երթիցուք խրատուց գրոց սրբոց հնոց և նորոց»[51]։

Ի վերջո նա գրում է.

«Իմացա՞ր ըստ իւրաքանչիւրոց խորհրդոց և գործոց զհատուցումն Աստուծոյ արդար կշռոքն։ Զի եղաւ պատուիրան մարդկան կալ հաստատուն յանարատ սրբութեան, և գործել զարժանն և զիրաւն, և կալ մնալ անշարժ ի լաւագոյնսն որպէս ասացաւ»[52]։

Անկասկած է, որ այսպիսի ծավալուն ու տաք պայքար ընդդեմ աղանդավորության կարող էր գոյություն ունենալ ոչ թե Գրիգոր Լուսավորչի ժամանակ, այլ IV—V դարերում, երբ այդ խնդիրն իրոք հրատապ էր դարձել ողջ քրիստոնյա աշխարհում և հատկապես Հայաստանում, ուր նեստորականության հետ մեկտեղ ավելի տարածվել էր մծղնեությունը[53]։

---

44 Նույն տեղում, էջ 80—81։

45 Նույն տեղում, էջ 81։

46 Նույն տեղում։

47 Նույն տեղում, էջ 82։

48 Նույն տեղում, էջ 144։

49 Նույն տեղում, էջ 50։

50 Նույն տեղում, էջ 233։

51 Նույն տեղում, էջ 274 (տարբերակ)։

52 Նույն տեղում, էջ 44։

53 Լուսավորչի ժամանակ աղանդավորության դեմ այդպիսի սուր պայքար չի տարվել. մեր նավանդ հանուն ուղղափառության, և բնական է կարծել, թե նրա ճառերն ավելի ուղղված պիտի լինեին ընդդեմ հեթանոսության։ Աղանդավորության մասին Հայոց եկեղեցու սկզբնական շրջանում տե՛ս Կ. Տեր-Մկրտչյան, Հայոց եկեղեցվո պատմություն, մասն Ա, էջ 82։

Անդրադառնանք և մի այլ հարցի.

Վանական կանոնների հիմնադիրը, դամ հունական վանականության հայրը համարվում է Բարսեղ Կեսարացին, որի կանոնները տարածվել են թե՛ Արևմուտքում և թե՛ Արևելքում, այդ թվում և Հայաստանում՝ չորրորդ դարի երկրորդ կեսերից հետո, այսինքն Գրիգոր Լուսավորչի մահից տասնյակ տարիներ անցած։ Մինչդեռ «Յաճախապատում» ճառերից մեկը վերաբերում է ուղղակի վանականությանն ու նրա կանոններին, որ «Բարսեղ Կեսարացու վանական կանոնների ամփոփումն է ներկայացնում»[54]։

«Բայց մեր ազգային ավանդությունը վանքերի հաստատությունը մեր մեջ ավելի հնացնում է. այսպես՝ Քրիստոնեության Ա դարու շինված է դնում Հոդյաց վանքը և Լուսավորչին վերագրում է վանական կանոններ («Յաճախապատում» Հառ ԻԳ), որոնց համեմատ նա վանքեր է հաստատել Հայաստանում։ Սակայն այս լոկ ավանդություն է, և Լուսավորչի անունով մնացած վանական կանոնները ուրիշ բան չեն, եթե ոչ Բարսեղ Կեսարացու վանական կանոններից քաղվածք, որը արդարև 370—375 թ. հետո Եվստաթիոսի հաստատած վանքերին ավելի որոշ կազմակերպություն տվեց... Վերջերը հայ վանքերը ընդունեցին մեծն Բարսեղի կանոնները...[55]»։

Վերոհիշյալ ԻԳ ճառում հանդիպում է հետևյալ հիշատակությունը. «Նա և ամենայն ուղղափառ ժողովք եպիսկոպոսաց՝ որ զուղղափառ հաւատսն հաստատեցին և կանոն սահմանեցին եկեղեցւոյ, և զայս սահմանեցին նզովիւք. Եղբայր որ, ասէ, մի՛ իշխեսցէ ի վանացն ելանել կալ ուր և կամեսցի, առանց կամաց առաջնորդին և եղբայրութեանն և որ որ յանդգնեալ զայս առնէ, ընդ նզովիւք կապեսցի ի հարցն։ Զի ամենայն որ յոր ինչ կոչեցան՝ ի նոյն կայցէ. ասէ Առաքեալն Աստուծոյ»[56]։

Ամեն ինչ և ամեն կանոն ճառում այնքան հանդամանորեն ու այնպիսի մանրամասնությամբ է բացատրվում, որ ակնառու երևում է վանքերի կառավարման մշակված սիստեմը պաշտոնեությունը, գործավորությունը, աշխատանքային օրենքները. մի բան, որ կարող էին ունենալ իրոք արդեն լիարժեք ձևավորում ստացած ու մեծ հաստատություններ, որ և կային՝ այդ տարիներին։

Այսպիսով, որոշակի է դառնում, որ «Յաճախապատում» ճառերն հիմնականում արտացոլում են IV—V դարերի եկեղեցական, հասարակական, քաղաքական դեպքերը. չեն անում ավելի ուշ շրջանի վերաբերող հիշատակումներ, նույնիսկ 451 թ. Քաղկեդոնի ժողովի մասին ակնարկներ. դեռևս կենդանի է Հայոց վերջին Արշակունի թագավորը և դեռևս պայքար կա ընդդեմ հեթանոսության[57], ուրեմն՝ ճառերի հեղինակն ապրել և գործել է IV դարի կեսերից մինչև V դարի երկրորդ կեսն ընկած ժամանակահատվածում։

Այս ճառերը հեղինակին բնութագրում են ոչ որպես սոսկ քրիստոնեության քարոզիչ, այլ եկեղեցական-քաղաքական գործիչ, որի բուն նպատակն է եղել պայքարել ընդդեմ այլադավանության՝ չարափառության ու զանազան հերձ-

54 Ա. Զամինյան, Հայոց եկեղեցու պատմություն, էջ 90։

55 Նույն տեղում, էջ 62—63։

56 «Յաճախապատում», էջ 256։

57 Տե՛ս «Յաճախապատում», էջ 31, 238։ Պ. Ներսեր, Հայկական աշխատասիրություններ, էջ 72—73, Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին, էջ 122։

վածների, ընդդեմ այն ամենի, որ կարող էր սպառնալ հայ եկեղեցու և հայության ազգային միասնությանը. սա քաղաքական պայքար էր՝ հաստատելու և ամրացնելու հայ ժողովրդի գոյության պահպանման իր ժամանակ եղած հուսալի հենարանը։

Այժմ տեսնենք, թե ո՞ւր է այդ հեղինակը լինել Մեսրոպ Մաշտոցը։

* * *

Հայտնի է, որ հողևոր ծառայության անցնելուց հետո Մաշտոցի առաջին լուսավորչական գործն է լինում շրջել Հայաստանի գավառները քրիստոնեություն տարածելու, հավատացյալների ու դեռևս անհավատների մեջ «կյանքի խոսքը» սերմանելու։ Նրա այս գործունեության հիմնական դրդապատճառն է լինում Հայրենի երկրի և իր ժողովրդի վտանգավոր վիճակի ծանր գիտակցությունը, նրա փրկությանն անձնուրացորեն ծառայելու անհաղթահարելի մղումը։

Բաժանված երկու հզոր պետությունների՝ Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև, Հայաստանն այնպես ի վիճակի չէր գոյության ֆիզիկական պայքար մղելու։ Մնում էր արթնացնել ու բարձրացնել ժողովրդի գիտակցությունը, ինքնաճանաչման հասցնել, որպես ազգային կերպարը, ինքնությունը, ի վերջո և գոյությունը պահպանելու հուսալի միջոց։ Քրիստոնեության տարածումը այդպիսի վստահություն էր ներշնչում։ Սակայն դրա հետ դեռևս կապված էին մեծ դժվարություններ, Հայաստանի երկու հատվածներում՝ Արևելյանում և Արևմտյանում, երկու տարբեր եկեղեցական լեզուների՝ ասորերենի և հունարենի գոյության պատճառով։ Պետք էր ունենալ մեկ սեփական, ազգային եկեղեցական լեզու։ Եվ ահա ծնունդ առավ մի նոր, պայծառ միտք՝ հայ նշանագրերի գյուտը և հայ գրի ու գրականության ստեղծումը, որը հնարավորություն կընձեռներ ոչ միայն կտրվել պարսից, այլև բյուզանդական ազդեցությունից։

Մեսրոպ Մաշտոցի քարոզչական՝ քաղաքական ու եկեղեցական գործունեությունը հաջողությամբ պսակվեց իր իսկ ձեռքով այդ միտքն ի կատար ածելուց հետո միայն, երբ հնարավորություն ստացավ քրիստոնեություն տարածել ո՛չ միայն շրջագայելով ու քարոզելով, այլև ուսուցանելով և գրավոր թղթեր ու ճառեր առաքելով. «...որպեսզի ոչ միայն ինքն մարթասցի անաշխատ ուսուցանել և լուսաւորել զժողովուրդն, այլև նոքին իսկ ժողովուրդք կարասցեն ընթեռնուլ և իմանալ»[58]։ Գրերի գյուտից հետո միայն, երբ բացվել էր գիտության ու իմաստության հասնելու ճանապարհը, նա կարողացավ հոգալ ամբողջ Հայոց աշխարհի բանկչության մասին, բուռը մարդկանց «քրիստոսաբեր փրկությունը» հասցնելու մասին։

Եվ սկսվում է մեծ հայրենասերի բուռն ու անձնուրաց նվիրագործության շրջանը։ Առաջին հայերեն բառերով նա հայ ժողովրդին պատվիրում է «ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»։ Եվ ասում, գիտենալով, որ առավել հուսալի ճանապարհը գրավոր խոսքն է, և ըստ Սաղմոսի այն բառերի, թե «Տէր պատմեսցէ զրովք ժողովրդոց»[59], չի գոհանում միայն «բազում շնորհագիր մատեանս զհարցն եկեղեցւոյ»[60] ձեռք բերելով, իր վարդա-

58 Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1784, էջ 489։

59 Սաղմոս ՁՁ, 6։ Տե՛ս Մ. Աբեղյան, Վարք Մաշտոցի, Երևան, 1941, էջ 56 և 111 (ծնթ. № 85)։

60 Վարք Մաշտոցի, էջ 68։

պետությունը խորացնելով, իր քարոզներով, նույնիսկ թարգմանություններով, ուսուցանելով, և հատուկ թղթեր ու ճառեր է հորինում բոլորին լիացնելու «Տիրոջ սուրբ ավետարանով»[61] և ամենքին զգուշացնելու, որ կյանքի ճանապարհով ընթանան։

Նրա գրավոր խոսքի մասին հետևյալ տեղեկություններն է հաղորդում վարքագիրը, նույն իր՝ Մաշտոցի աշակերտ Կորյուն Վարդապետը. «Ապա յետ այնորիկ դարձեալ այնպիսի առաւել և բարձրագոյն վարդապետութեամբն՝ սկսեալ երանելոյն Մաշթոցի ճառս յաճախագոյնս, դիւրապատումս, շնորհագիրս, բազմադիմիս ի լուսաւորութենէ և ի հիւթոյ գրոց մարգարէականաց կարգել և յօրինել, լի ամենայն ճաշակօք աւետարանական հաւատոցն ճշմարտութեան։ Յորս բազում նմանութիւնս և օրինակս ի յանցաւորացս աստի, առաւելագոյն վասն յարութենական յուսոյն առ ի հանդերձեալսն, յերիւրեալ կազմեալ, զի հեշտընկալք և դիւրահասոյցք տխմարագունիցն և մարմնական իրօք զբաղելոցն լինիցին, առ ի սթափել և զարթուցանել և հաստատիմն առ ի խոստացեալ աւետիսն քաջալերել»[62]։

Այս ճառերի գրության ժամանակը ճիշտ և ճիշտ համընկնում է «Յաճախապատումի» համար սահմանված միջոցին։ Ժամանակագրական հաջորդականությամբ շարադրելով իր ուսուցչի առաքելաշնորհ գործը, Կորյունը հասնում է մինչև 431 թ. դեպքերը և ավելի ուշ, երբ Սահակ կաթողիկոսի և Մեսրոպ Մաշտոցի մի խումբ աշակերտներ, որոնց թվում և ինքը Կորյունը, վերադառնում են Հունաց կողմերից, Նիկիական ու Եփեսոսական ժողովների կանոններով և «առաջի դնէին հարցն զբերեալ կտակարանսն եկեղեցւոյ սրբոյ»[63]։

Այնուհետև, թարգմանություններից բացի, թե՛ Սահակը և թե՛ Մաշտոցը, օր ու գիշեր զբաղվում են ընթերցանությամբ «և նովիմբ ծաղկեալք և շահաւետեալք՝ օրինակ բարեաց ուսումնասէր առընթերակայից լինէին»[64]։

Սրանից հետո միայն, գրում է Կորյունը, այսինքն 431 թ. ինչ որ միջոց անցած, երբ Մաշտոցն արդեն շատ ու բարձրագույն ուսում ուներ, սկսեց կարգել և հորինել հաճախագույն և դյուրապատում ճառեր[65]. այսինքն, հենց այն թվականներին, երբ, ինչպես տեսանք, հրապարակ եկավ «Յաճախապատումը»։

Բնական է, որ այդ տարիներին գրած իր ճառերում Մաշտոցն անդրադարձած լիներ թե՛ իրեն և թե՛ իր ժամանակն այնչափ հուզող Նիկիայի ու Եփեսոսի ժողովներին ու նրանց սահմանած կանոններին՝ ուղղափառության, աղանդների կամ հերձվածների մասին։ Այդ երևում է և «Յաճախագոյն» ճառերի Կորյունի վերը բերած որակումից, ինչպես և Մաշտոցի հետագա գործունեության հետևյալ բնութագրումից։

«Յայնմ ժամանակի բերեալ երևեցան ի Հայաստան աշխարհին գիրք սուտապատումք, ընդունայնախօս աւանդութիւնք առն ուրումն հոռոմի, որում Թէոդորոս անուն։ Վասն որոյ սինհոդոսական հայրապետացն եկեղեցեացն սրբոց նշանակեալ՝ ազգ առնէին ճշմարտահաւատ փառաւորչացն Սահակայ և Մաշտոցի։ Եւ նոցա ճշմարտասէր փութով զայն ի միջոյ բարձեալ՝ աշխարհահալած արտաքոյ իւրեանց սահմանացն մերժեցին, զի մի ի լուսաւոր վարդա-

61 Նույն տեղում, էջ 64։
62 Նույն տեղում, էջ 78։
63 Նույն տեղում, էջ 76։
64 Նույն տեղում, էջ 76։
65 Նույն տեղում, էջ 78։

պետութիւնն ծուխ ինչ սատանայական յարիցէ»[66]։ Եվ ապա Մեսրոպ Մաշտոցի մասին.

«Եւ զգայգ և զցերեկ պահօք և աղօթիւք և ուժգին խնդրուածովք և բարձրագոյն բարբառովք զաստուածադիր պատուիրանացն հրամանս յուշ առնելով՝ զգուշացուցանէր ամենայն մարդոյ...

Եւ մինչդեռ այնպէս մերձաւորացն առ իւրև զհոգևոր եռանդն ածէր. և բազում թուղթս խրատագիրս և զգուշացուցիչս ընդ ամենայն գաւառս առաքէր...»[67]։

Կորյունը Մաշտոցի մասին հաղորդում է նաև, թե նա Հունաց կայսրից պատվեր ստացավ «վասն ժանտագործ ազգին բարբարիանոսաց»[68] և հայրենիք դառնալով ձեռնարկեց «զդժպատեհ և զկամակոր բարբարիանոս աղանդն քննելոյ»[69]։

Ենթադրվում է, թե այդ աղանդը նույնն է, ինչ որ մծղնեությունը և կամ այն, որ ընդհանուր եկեղեցու պատմության մեջ մեսսալյաններ են կոչվում։ Ըստ աղբյուրների սրանք մերժել են եկեղեցում աղոթելը, պահքը և այլ խորհուրդներ[70], հրաժարվել են ճգնությունից, անխտիր հաղորդակցություն պահանջել տղամարդկանց ու կանանց մեջ[71], կենցաղավարել ով ինչպես կամենա, այնպես որ պատմողները դարշելի են համարել անգամ այդ մասին խոսելը[72]։

Ըստ Կորյունի Մաշտոցը ապաշխարության և զանազան պատիժների է ենթարկել այդ աղանդի հետևորդներին և երբ ոչինչ չի օգնել, դուրս է քշել երկրից[73]։

Հայտնի է նաև, որ Մեսրոպ Մաշտոցն իր շրջագայության ընթացքում բազմաթիվ վանքեր է հիմնել Հայաստանի տարբեր վայրերում։ Ամենայն հավանականությամբ նաև օրենքներ է դրել-թողել այդ վանքերի կառավարման ու միաբանների կենցաղավարության մասին, հենվելով Բարսեղ Կեսարացու և հետագա տիեզերական ժողովներում սահմանված վանական, եկեղեցական կանոնների վրա։

«Յաճախապատում» ճառերի թե՛ գրության ժամանակը և թե՛ նյութը հարազատորեն համընկնում են այն բնութագրումներին, որ գտնում ենք շարադրած՝ Մեսրոպ Մաշտոցի մասին՝ Կորյունի աշխատության մեջ։

Մեսրոպ Մաշտոցի կյանքի ու ողջ գործունեության բուն նպատակը, սկը-

---

66 Նույն տեղում, էջ 86։

67 Նույն տեղում, էջ 90—92։

68 Նույն տեղում, էջ 66։

69 Նույն տեղում, էջ 68։

70 Ե. Տեր-Մինասյան, Ընդհանուր եկեղեցական պատմություն, հատ. առաջին, էջ 282։

71 Կ. Տեր-Մկրտչյան, Հայոց եկեղեցվո պատմություն, էջ 132—134։

72 Միաբան (Գ. Տեր-Մկրտչյան), Գիրք հերձվածոց, Վաղարշապատ, 1892, էջ 19։

Այդ աղանդն է ակնարկում նաև Ղազար Փարպեցին, գրելով «Որ և զանուն անգամ աղանդոյն... կարի յոյժ համարիմ ապտեղի՝ նշանակել գրովք։ ...Ի հաւատոյ և յուսմանէ ոգևոք երևին, և ի գործս ծոյլք և անժոյժք... և անկարգ ըստ վարուց...»։ Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին, էջ 626։

73 «Եւ իբրև ոչինչ գտանէր հնարս յուղղութիւն ածելոյ, առեալ ի գործ արկանէր զիշուառացուցիչ գաւազանն, ծանրագոյն պատուհասիւք ի բանդս, ի անջանս, ի գելարանս։ Իսկ յորժամ այնուս ևս պակասեալք ի փրկութենէն կտանէին, խորտակեալս, տալա խանձեալս, մրեալս և գունակ գունակ խայտառակեալս, և յաշխարհէն կորզէին»։ Տե՛ս, Վարք Մաշտոցի, էջ 68։

սած քարոզչական աշխատանքից, գրերի գյուտից, վարդապետությունից ու թարգմանչությունից, մինչև ճառերի ու թղթերի հորինումը, այն քաղաքական պայքարն էր, որի անխոնջ մարտիկն է եղել «Հաճախապատումի» հեղինակը։

Անշուշտ անհավանական չէ ենթադրել, որ ճառերում կարող են լինել և հետագա մասնակի նորամուծություններ, սակայն իրենց հիմնական մասով նրանք պատկանում են IV—V դարերում ապրած այնպիսի մի գործչի, մտածողի ու հեղինակության, որ կարող էր լինել գրեթե միայն Մեսրոպ Մաշտոցը։

* * *

Մ. Աբեղյանը գտնում է, որ «Յաճախապատում» ճառերը Լուսավորչին են վերագրվել «այդ գրվածքին ավելի մեծ հեղինակություն ընծայելու համար»[74]։

Այս կարծիքն ավելի հիմնավոր է դառնում նրանով, որ Լուսավորչինն են համարվել ոչ միայն Մաշտոցի գործերը, այլև Սահակ Պարթևի կանոնները[75]։ Թվում է, թե դրան օգնել է և այն հանգամանքը, որ ճառերում խոսվում է հեթանոսության մասին ևս։

Անշուշտ «Յաճախապատումի» հեղինակն, ի թիվս այլ աղբյուրների, օգտվել է նաև Գրիգոր Լուսավորչի վարդապետությունից, որը նույնպես կարող է տեղի տված լինել սխալանքի։

Մաշտոցի «Յաճախագոյն» ճառերի մասին Մ. Չամչյանն իր խոսքերով այսպես է գրում. «Կարգեաց և յօրինեաց բազմապատիկ ճառս գեղեցիկս և ընտիրս, առաջի դնելով զյոլով առակս և նմանութիւն առ ի դիւրընկալ ընծայելոց տգիտաց»[76]։

Մի կողմ թողնելով այն հանգամանքը, որ «Յաճախապատում» ճառերն իրոք գրված են բազմաթիվ պատկերներով ու համեմատություններով, միտքը պարզելու, դյուրըմբռնելի դարձնելու նպատակով[77], նկատենք նաև որ ըստ էության նույն իմաստն են խտացնում Չամչյանի գործածած «Բազմապատիկը», «Յաճախապատումն» ու Կորյունի «Յաճախագոյնը»—տեսակ տեսակ, պատվական, շատ անգամ, ճոխ ու երկայն։

Որևէ հիշատակություն այն մասին, թե Լուսավորիչը գրել է «Յաճախապատում» ճառեր, հին աղբյուրներում չենք հանդիպում[78]։ Որպես վկայաթուղթ մնում է «Ագաթանգեղոսը», որը գրում է «ճառս յաճախագոյնս» և ոչ «յաճախապատումս», սա ևս, ամենայն հավանականությամբ, պատճառ է դարձել ճառերի այդ ժողովածուն վերագրելու Գրիգոր Լուսավորչին։ Եթե հենվելու լինենք դրա վրա, պետք է ասենք՝ լուսավորչին են պատկանում ոչ թե «Յաճախապատում, այլ յաճախագոյն» ճառերը։ Սակայն այժմ, երբ վաղուց ի վեր ապացուցված է Ագաթանգեղոսի ոչ միայն «Յաճախագոյն» ճառերի, այլև շատ ուրիշ հատվածների, ուղղակի, երբեմն նույնիսկ անհարկի քաղված լինելը Կորյունից, բնական է դառնում այդ ճառերի հեղինակ համարել Մեսրոպ Մաշտոցին։

74 Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին, էջ 119—120։

75 Տե՛ս նույն տեղում, էջ 117։

76 Մ. Չամչյան, Պատմութիւն հայոց, էջ 524։

77 Տե՛ս «Յաճախապատում», էջ 54, 183, 299 և այլն։

78 «Յաճախապատումի» երրորդ հրատարակության համար հիմք է հանդիսացել ամենահին ձեռագրական տվյալը, որ համարվում է 929 թվականի գրչություն. սակայն, ըստ էության, օգտագործվել է նրա 1673 թ. ընդօրինակությունը (տե՛ս «Յաճախապատում», էջ ԺԵ)։